ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի օգոստոսի 10-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի փետրվար 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ. «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի օգոստոսի 10-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 պայմանագրի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել ավելացնել ձեռքբերվող ապրանքի քանակը, որը չի գերազանցում Պայմանագրի գնի 10%-ը:

Փոփոխության նկարագրություն. «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի օգոստոսի 10-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 Պայմանագրի.

- Հավելված թիվ 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների ձեռքբերման քանակը ավելացվել է պայմանագրի գնի 10%-ով, որը կազմում է է «16112250» (տասնվեց միլիոն հարյուր տասներկու հազար երկու հարյուր հիսուն դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
- 3.1 կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Վաճառողի կողմից մատակարարված ապրանքի գինը կազմում է «177234750» (հարյուր յոթանասունյոթ միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր հիսուն դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն»:
- Հավելված թիվ 1-ով ներկայացված աղյուսակի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված «Ընդհանուր գումար/ՀՀ դրամ» սյունակի «161122500» ՀՀ դրամ գումարը համապատասխանաբար փոփոխվել է «177234750» ՀՀ դրամով:
- Հավելված N 3-ով ներկայացված վճարման ժամանակացույցը խմբագրվել և հաստատվել է համաձայն՝ 2024 թվականի հունվարի 1-ին կնքված համաձայնագրի Հավելված 1-ի:

Փոփոխության հիմնավորում. Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջներ:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-**